# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱՀԵՐԹ՝ ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **05.06.2025թ.**

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) նախագահի 2025 թվականի հունիսի 3-ի N 02-Լ որոշմամբ Տեսչական մարմնի հաստիքացուցակում փոփոխություն կատարելու հարցը քննարկելու և հավանություն տալու, Տեսչական մարմնի Որակի ապահովման վարչության 2025 թվականի 1-ին եռամսյակի հաշվետվության և կատարողականի գնահատման հարցերը քննարկելու և հաստատելու նպատակով 2025 թվականի հունիսի 4-5-ը ներառյան անցկացվեց արտահերթ նիստ՝ էլեկտրոնային քվեարկությամբ:

Քվեարկության նյութերը սահմանված ժամկետում ներկայացվել են Խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին:

**Օրակարգ.**

1. Հավանություն տալ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի հաստիքացուցակում փոփոխություն կատարելուն:
2. Հաստատել ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2025 թվականի 1-ին եռամսյակի կատարողականի գնահատականը:
3. ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի Որակի ապահովման վարչության 2025 թվականի 1-ին եռամսյակի հաշվետվություն:

**Քվեարկությանը մասնակցել են՝**

| | |
|---|---|
| Ա. Ավանեսյան | - ՀՀ առողջապահության նախարար (Խորհրդի նախագահ) |
| Ռ. Սարգսյան | - ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ |
| Ժ. Խառատյան | - ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ |
| Ա. Խոջոյան | - ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ |
| Օ. Աբրահամյան | - ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ |
| Վ. Սիրունյան | - ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ |
| Տ. Քեյան | - «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» հասարակական կազմակերպության աջակցության ծրագրերի ղեկավար |
| Շ. Դանիելյան | - Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի (ԵՊԲՀ) աշխատակազմի ղեկավար |
| Հ. Լիլոզյան | - Հայաստանի ամերիկյան համալսարանի Ջերալդ և Փաթրիշա առողջապահական գիտությունների ֆակուլտետի գիտաշխատող |

**Քվեարկությանը չեն մասնակցել՝**

Ժ. Մայիլյան - «Իրական աշխարհ, իրական մարդիկ» սոցիալական հասարակական կազմակերպության նախագահ

**Քվեարկությունը համարվում է կայացած:**

**Քվեարկության արդյունքում.**

1) Ա. Ավանեսյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,
2) Ռ. Սարգսյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,
3) Ժ. Խառատյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ (ներկայացրել է դիտարկումներ),
4) Ա. Խոջոյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,
5) Օ. Աբրահամյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,
6) Վ. Սիրունյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,
7) Տ. Քեյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,
8) Շ. Դանիելյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,
9) Հ. Լիլոզյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ:

**Քվեարկության արդյունքը՝** օրակարգի բոլոր հարցերին **9 կողմ, 0 դեմ:**

**Խորհուրդը որոշեց.**

1. Հավանություն տալ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի հաստիքացուցակում փոփոխություն կատարելուն:

2. Հաստատել ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2025 թվականի 1-ին եռամսյակի կատարողականի գնահատականը:

3. Ընդունել ի գիտություն ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի Որակի ապահովման վարչության 2025 թվականի 1-ին եռամսյակի հաշվետվությունը:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ